

ՓԻՐՈՒԶ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ ՊԱՏՎՈՂ ՆԱՅԿԱԿԱՆ ՄԻ ՁԵՌԱԳՐԻ ՄԱՍԻՆ

2008-2009 թ., կրթությունն շարունակելով Վարշավայի պետական համալսարանում, պարիվ ունեցա աշխատելու *Լեհաստանի մշակույթի և ժառանգության հիմնարկությունում*¹: Աշխատանքը հիմնականում կապված էր կազմակերպության ֆոնդերում պահվող հայկական ձեռագրերի մասին փոփոխական տվյալների տրամադրման և դրանք լեհերեն թարգմանելու հետ: Այդ ընթացքում զբաղվեի ձեռագրի մասին և փոփոխական տվյալների հաղորդումը:

Ձեռագիրը Սրանիսլավի (ներկայիս Իվանո-Ֆրանկովսկ) հայ կաթոլիկ եկեղեցու Մեռելոց գիրքն է („Liber Defunctorum Parochianorum Stanislavoviensium Armenorum“, *Գիրք մեռելոց Սրանիսլավի ժողովրդի համար. Գրքա 1715 և Նայոց ՌՃԿԴ*), որի հայերեն հավաքածուն գրել է լեհահայ ակադեմիկոս մարտիրոսյան Սարգիս Ռոշքան: Ռոշքանի Մեռելոց գիրքը գեղարվեստական նախապես ներկայացրել ենք 2008թ. ապրիլի 8-ին Կրակովի Լեհական գիտությունների ակադեմիայում տեղի ունեցած *Armenica Cracoviensia* գիտաժողովում:

Լեհահայ փոփոխական, բառարանագետ, ժամանակագիր և կրոնական գործիչ Սարգիս Ռոշքան (1670-1739) ծնվել է Կամենեց Պոդոլսկում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում, ապա շարունակել Նոմոմ, որտեղից Լեհաստան է վերադարձել որպես փոփոխականության և աստվածաբանության դոկտոր²: Միևնույն ժամանակ Ռոշքան լայն գործունեություն է ծավալել գիտության ոլորտում՝ հեղինակելով բառարան, ժամանակագրություն, «*Լեհաստանի եպիսկոպոսների կենսագրություն*»³ և քերականական աշխատություններ⁴: Միևնույն ժամանակ հանդիսացել է ինչպես Լեհաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս գործող հասարակական մի շարք կազմակերպությունների ու «եղբայրությունների» կանոնադրության հեղինակ⁵: Վերը ասվածից կարելի է պարզեցված կազմել, թե որքան լայն է եղել Ռոշքանի հետաքննարկությունների շրջանակը:

Մեռելոց գիրքը ունի 164 էջ, որից 2-ից 4 և 6 էջերը դարձրել են: Ձեռագրին են կցված

1 Լեհաստանի մշակույթի և ժառանգության հիմնարկությունը ստեղծվել է 2006թ. ապրիլի 7-ին Վարշավայում: Նրա ֆոնդերում պահվում են երկրորդ աշխարհամարտից հետո լեհական արևելյան տարածքներից ներկայիս Լեհաստանի տարածք ընդգրկված մի շարք ձեռագրեր ու փոփոխական տվյալներ:

2 Sadok Barącz. Żywoty sławnych ormian w Polsce, Lwów, 1856, s. 281-282.

3 Տե՛ս Վ. Գրիգորյան, Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դարպասի արձանագրությունները, Երևան, 1963, էջ. 22-24:

4 Ձեռագրի մասին տե՛ս Վ. Գրիգորյան, Նայկական ձեռագրերի հերթերով, Գաբուն, 1971, թ. 1, էջ. 29-36:


5 Տե՛ս Ս. Բոլանջյան, Գերլա հայաբաղադր և նրա հայերեն ձեռագրերի ժողովածուն, Բանբեր Մարտնադարանի, թ. 6, 1962, Երևան, էջ. 504-518 /Գ. Գովրիկյան, Դանսիլուանիոյ հայոց մարտնադարանը կամ նկարագիր Կերլա հայաբաղադրի ի գիր ի պարկերս, Վիեննա, 1896, էջ 76 /Գ. Գովրիկյան, Նայք Յեղիսաբեթուպիոյ Դանսիլուանիոյ, 1893, Վիեննա, էջ. 55:

3 անգամ թերթիկներ: Այն ընդգրկում է 1715-1829 թթ.: Առաջին գրությունը գրված է լատիներեն, հաջորդ երեքը՝ հայերեն: Նաջորդող գրառումները կրկին լատիներեն են: Նեղինակը վերադառնում է հայերեն գրագրությանը 1719 թ. սեպտեմբերին արված գրությամբ, որը կապահավանվի մինչև Ռոշթայի մահվան պարթիվը՝ 1739 - ի հոկտեմբերի 30-ը, ինչպես նաև մեկ գրառում՝ արված 1739 թ. նոյեմբերի 15-ին: Այնուհետև մաքյանն ամբողջությամբ մինչև 1829 թ. շարունակված է լատիներենով:

1715-1716 թթ. հայերեն առաջին երեք գրառումների քակ սպորագրել է ոմն Գեորգ Զրիստիսիսը:

Նավանական է, որ 1716-

1732 թթ. գրառումները՝ թե՛ հայերեն և թե՛ լատիներեն արված են անձամբ Ստեփանոս Ռոշթայի ձեռքով, քանի որ դրանցից յուրաքանչյուրի քակ երևում է նրա հայերեն կամ լեհերեն սպորագրությունը, երբեմն էլ անվան և զբաղեցրած պաշտոնի առաջին պատերը: Երբեմն Ռոշթան հանդես է գալիս առաջին դեմքով, երբ խոսքը վերաբերում է իր ազգականներին՝ կիրառելով «*իմ մորքոյս*» Կեղբույրա [Գերբույրա] Աքսենությունից կամ «... *իմ սրբալիս սիրելի եղբորդիս*» Ծառուկն Ավարտունց Ռոշթայի դեպքում: Սակայն 1732 թ. հոկտեմբերի 20-ի գրառմամբ Յակոբ Վարդերեշիվիցի մահման ամսաթվի, անգամ օրվա ժամի մանրամասն տեղեկության հետ ներկայացվող կենսագրական մի ընդարձակ գրառումից⁶ հետո ձեռագիրը կտրուկ փոխվում է: Նավանաբար Ռոշթան այդ գրառումից հետո թելադրել է այլ անձի, մյուս կողմից ամբողջ ընթացքում գրառում կատարողը հանդես է գալիս առաջին դեմքով, որին կարելի է նույնացնել Ռոշթայի հետ: 1732-1739 թթ.




«Մեռելոց Գրքի» փաղտաթերթը

⁶ Նավանաբար Սաղոկ Բարունցը, Լեհաստանի նշանավոր հայերի կենսագրությունների՝ Յակոբ Վարդերեշիվիցի կենսագրությունը շարադրելիս օգտվել է Ռոշթայի Մեռելոց գրքից, քանի որ երկու տեքստերի շարադրման հերթականությունը գրեթե նույնն է, այն պարբերությամբ, որ Ռոշթայի մոտ տեղեկությունը շարավելի ընդարձակ է:

նշումներում այլևս չի երևում Ռոշթայի ստորագրությունը: Նրա մահվանից հետո մապրյանի գրառումները արված են լաթիներեմով:

Մեռելոց գրքի նախաբանում՝ թվագրված 1716 թ. մայիսի 16-ով, Ռոշթան գրում է, որ նախ



Մի էջ ձեռագրից

իր ղեկանության՝ զահերեցության, ապա օֆիցիալության և Սյրանիսլավում պրեսպոլիտության՝ քահանայագործության փարիներին ըստ եկեղեցական կանոնների հոգ փարավ բարեկարգումներ անցկացնել:

„Եւ քանզի ի մէջ այլոց պակաս էր գիրքն մեռելոց, ջանս եղի շարադրել ի կարգի գանութնս ևնոցս, որք առաջի իմ մեռան...“, ապա նշում է որ իր նախորդից՝ Խաչատուր Զախնովիցից փեղեկություններ է բաղել մինչ իր Սյրանիսլավ ժամանելը մահացածների մասին, ...գորս ի մի րոնէր կամ ուրէք ուրէք նշանեալն էր, և գայնոսիկ եղի ըստ սմին“:

Ռոշթայի այդ նախաձեռնությունը թերևս անկարար է մնացել, քանի որ նախաբանին հաջորդող էջերը դարարկ են, իսկ առաջին

գրությունը սկսվում է 1715 թ.՝ Ռոշթայի պրոբոշ՝ ծխական քահանա դառնալուց հետո:

Սակայն ձեռագրին կցված 3 անջար թերթիկներից մեկում պահպանվում են 1680-1714 թթ. մահացածների անվան ցանկ: Նավահաբար սա պիտի հանդիսանար նախաբանում ասվածի փրամաբանական շարունակությունը:

Սյրանիսլավի Մեռելոց գիրքը չի կարելի դիտարկել որպես ծխական շաքբային մապրյան: Բացի պարպադիր համարվող նշումներից, այսփեղ փեղ են գրել շարավելի լայն ընդգրկում ունեցող փեղեկություններ: Թեև հեշտ է նշմարել բոլոր գրառումների համար մի ընդհանուր փրամաբանություն, այնուհանդերձ հեղինակը հաճախ շեղվում է դրանից՝ հաղորդելով նման կարգի մապրյանների համար ոչ այնքան փիպական փվյալներ: Գրառումների ընդհանուր կարգը ներկայանում է հետևյալ կերպ՝ մահվան փարեթիվը, մահացածի անունը, նրա հոր անունը, փարիքը, մահվան պարծառը, գերեզմանի փեղադրությունը, մեղքերի խոստովանություն, վերջին հաղորդություն և օծում իրականացնող հոգևորականի անունը: Բացի վերոհիշյալ պարպադիր փվյալներից, երբեմն հեղինակը փալիս է այլ կարգի փեղեկություններ, ինչպես օրինակ՝ մահացածի

ընտանիքի անդամների, նրա՝ հասարակության մեջ զբաղեցրած դիրքի, բարեգործական գործունեության, մինչև Սպանիալավ փողափռվելը նրա բնական վայրի, երբեմն էլ մականվան մասին:

Գրառումների մեծ մասը վերաբերում է Սպանիալավի հայ կաթոլիկ ծխական համայնքի անդամներին, թեև հանդիպում ենք նաև Յազովեցից, Լվովից, Կամենեց Դոդոսկից, իսկ երբեմն էլ Լեհաստանի հարևան պետություններից Սպանիալավ փողափռվածների մասին փոխադրվող, ինչպես օրինակ Մոլդովայից սերող Ուրմանցի ընտանիքի դեպքում⁷: Մահացածները ընդգրկում էին Սպանիալավի հասարակության քաղաքի խավերից են՝ արհեստավորից մինչ քանությանը: Ռոշթան նշում է նաև մի շարք խառնամուսնությունների մասին, որպեսզի գերակշռում էր որպես կանոն հայ կին և լեհ կամ ռուս ամուսին կարգը:

Գրառումներում մեծ փոքր է հարկացված ժամանակի հայրնի անձանց, իսկ որոշ գրառումներ կենսագրական հարուստ աղբյուր են ծառայում: Մեռելոց գրքում փոքր գրած անձանցից կարելի է առանձնացնել Պետրոս Ֆորպուրուարի օրինակը՝ ծնված թուրք հորից և քրիստոնյա մորից Դիարբեքիում, մկրտությունը ստացել է Նոյմում 1729թ. մայիսի 5-ին: Մահացել է 1737թ. Սպանիալավում 60 տարեկան հասակում: Նմանապես աչքի է ընկնում Խափանստանի (Կասպան) մոտ գտնվող Տուգալի (Դիգակ) երկրից Բաղդասար Խաթիային վերաբերող գրառումը՝ ամուսնացած Մորեայում, ուր նրա կնոջը և որդիներին գերի էին վերցրել թուրքերը: Այս փաստը վկայված էր իտալական կոնդակներով, որից օգտվել էր նաև Ռոշթան՝ թվագրված 1721 թ.: Մինչ թուրքերը պայքարում էին վենետիկցիների դեմ, նա երկրից երկիր էր թափառում ու գումար հավաքում ընտանիքը գերությունից ազատելու համար: Արդեն հյուծված՝ հանգրվանում է Սպանիալավում, ուր մի քանի օր հետո՝ 1724 թ. մարտի 27-ին մահանում է: Ռոշթան նշում է, որ Բաղդասարը իր մոտ ունենում է ընդամենը կես գլուխ, քանի որ հավաքած գումարով ազատել էր որդուն, իսկ այն, ինչ կուտակել էր հետագայում, ուղարկել էր հայոց Արեշեան քաղաքը՝ ազատելու ընտանիքի մյուս անդամներին: Միգրացիայից հետո վերաբերում է Աղվանքի Արեշ քաղաքին:

Տեղեկությունների հարստության առումով աչքի են ընկնում Ռոշթայի ազգականներին՝ մասնավորապես մորաքրոջը՝ Կեղբուրա Աքսենյովիչին (մահացած 1726 թ.), եղբորորդուն՝ Ծառուկ Ասվապուրենց Ռոշթային (մահացած 1728թ.) և եղբորը՝ Ասվապուր Սյուրխանենց Ռոշթային վերաբերող գրառումները՝ մահացած 1729 թ....”*իմ Մաճառստան [Տրանսիլվանիա] գոյով*” ինչպես նշում է Ռոշթան:

Մեռելոց գիրքը փողեկություն է հաղորդում Սպանիալավում փողի ունեցած համաճարակների մասին: Մասնավորապես փողեկանում ենք 1719 թ. Սպանիալավում բռնկված ժանտամախի համաճարակի և նրա զարգացման փուլերի մասին: Համաճարակի առաջին գոնի մասին փողեկությունը թվագրված է 1719թ. սեպտեմբերի 7-ին, երբ 34 տարեկան հասակում մահանում է Յան Թումանովիչի այրին՝ Ռոզալիան իր երեք դստեր հետ, որոնց հուղարկավորությունը, ելնելով անվտանգության նկատառումներից, կատարվում է քաղաքի պարիսպներից դուրս: Համաճարակի հաջորդ գոնը աղա Ասվապուր Սյուրխանենցի կին պանի [փրկին] Էփին էր, որը վերոհիշյալ Ռոզալիային այցելությունից հետո ևս վարակվեց և 10 օր անց մահացավ: Մինչ այդ պանի Էփին եկեղեցական

7 Տե՛ս Ս. Քոլանջյան, Գեղա հայաքաղաքը և նրա հայերեն ձեռագրերի ժողովածուն, էջ 502:

կարիքների համար Սպանիալվի Սբ. Գրիգոր Լուսավորչի “եղբայրությանը” նվիրաբերեց 1000 գլուխ: Նույն “եղբայրությանը” նույնքան գումար է նվիրաբերում նաև պանի Չիչակը, որը մահացավ 32 տարեկան հասակում՝ 1719թ. հոկտեմբերի 10-ին: Ժանտամահի գոհերի թիվը ավելին էր, միայն Ռոշթային նախորդած Սիմոն Խաչատուր Զախնովիչի մահվան փվյալով՝ 1719 թ. դեկտեմբերի 16-ին “...դադարեցաւ ժանտն ի քաղաքիս ի մէջ ազգիս մերոյ”:

Շնորհիվ Մեռելոց գրքում գերեզմաններից յուրաքանչյուրի՝ եկեղեցու կամ հարևան այլ շինության նկարագրման ունեցած դիրքի կարող ենք վերականգնել 18-րդ դարի սկզբին Սպանիալվում հայկական եկեղեցու և նրա շրջակայքի պարկերը: Ռոշթան իր Մեռելոց գրքի հայերեն հարվածներում կիրառում է հայերենով գրված օտար բառեր, հավանաբար այն ձևով, ինչպես դա ընդունված է եղել լեհահայերի շրջանում, մասնավորապես սկեքի-świecki (աշխարհիկ), սուխոտա-suchoty (թոքախտ), վալ-wal (գաղիթափ), գրավեց-krawiec (դերձակ), շփարալ-szpital (հիվանդանոց), շկեք-sklep (խանութ), օսոպա-osoba (անձնավորություն), բիսար-pisarz (գրող), բարգան-parkan (պարիսպ), սաքիսիա-zakrystia (գանձարան), մոնստրանցիա-monstrancja (սկիհ): Նկարագրվող են ներկայացնում նաև մարդանուն հիշարակված անունները, քանի որ հանդիպում են դեպքեր, երբ իրական անվան փոխարեն կիրառվում է փաղաքշական փաղաքակերպը: Քանզի Մեռելոց գիրքը պաշտոնական փաստաթուղթ է, ուստի ենթադրում ենք, որ իրականում անունները կիրառվել են այդ կերպ, օրինակ՝ Նասդուշա (Անաստասյա), Կեդրուպա (Գերարդուս), Գաշու (միգուցե Կաշիա, Կարաժինա), Կերուշա (Գերուշինա), Ֆրուզինա (Եֆրուզինա), Զապու-Զարեկ (?), Ենդրեկի (Յենդրեկ, այսինքն Անդժեյ): Մարդանուն հանդիպում ենք նաև որոշ անձանց մականուններ, ինչպես օրինակ չոպան (չոբան), շլեխտա (լեհ. szlachta – շլախտա-ազնվական), զագուլկա (ռուս. козубка? – սառցակտոր), շմուքի (լեհ. szmugiel – մաքսանենգ):

Սպանիալվի Մեռելոց գիրքը լեհական արխիվներում պահվող բազմաթիվ աղբյուրներից միայն մեկն է, որը պարունակում է լեհահայերի պարմությանը վերաբերող փոփոխություններ: Նայ իրականությանը դրանք գրեթե անհայտ են, քանի որ Լեհաստանում հայ եկեղեցու՝ կաթոլիկ եկեղեցու հետ բռնի դաշինքից հետո, բացառությամբ մի քանի հեղինակների, փոփոխ հայ համայնքը պիտակավորվել է որպես հայության համար անդամալիտեն կորած: Նման կարգի ձեռագրերը գալիս են հերքելու փրապետող այդ կարծիքը և անհրաժեշտություն են առաջացնում վերանայելու Լեհաստանում հայ համայնքի պարմությունը կաթոլիկություն ընդունելուց հետո: Մինչ օրս էլ Լեհաստանի քաղաքներում ապրում են լեհահայեր, որոնք հպարտությամբ են նշում քենց հայկական ծագման մասին և քաղաքի միջոցառումների շնորհիվ նպաստում են Լեհաստանում հայ մշակույթի քարածմանը: